ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797-04.12.2020-ԳԿ-011/0), «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[1] -04.12.2020-ԳԿ-011/0), «Հիմնադրամների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[2] -04.12.2020-ԳԿ-011/0), «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[3] -04.12.2020-ԳԿ-011/0), «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[4] -04.12.2020-ԳԿ-011/0), «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[5-] 04.12.2020-ԳԿ-011/0), «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[6] -04.12.2020-ԳԿ-011/0), «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[7-] 04.12.2020-ԳԿ-011/0), «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[8] -04.12.2020-ԳԿ-011/0), «Էկոլոգիական կրթության եւ դաստիարակության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[9] -04.12.2020-ԳԿ-011/0), «Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[10] -04.12.2020-ԳԿ-011/0), «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[11] -04.12.2020-ԳԿ-011/0), «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[12] -04.12.2020-ԳԿ-011/0), «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[13] -04.12.2020-ԳԿ-011/0), «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[14] -04.12.2020-ԳԿ-011/0), «Զորամասերի եւ զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[15] -04.12.2020-ԳԿ-011/0), «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[16] -04.12.2020-ԳԿ-011/0), «Դեղերի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[17] -04.12.2020-ԳԿ-011/0), «Հայաստանի Հանրապետության պետական պարգեւների եւ պատվավոր կոչումների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[18] -04.12.2020-ԳԿ-011/0), «Նոտարիատի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[19-] 04.12.2020-ԳԿ-011/0), «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[20] -04.12.2020-ԳԿ-011/0), «Լեզվի մասին» օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[21] -04.12.2020-ԳԿ-011/0) եւ «Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-797[22] -04.12.2020-ԳԿ-011/0)

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՆ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ԱԺ պատգամագոր Մխիթար Հայրապետյան ԱԺ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	Բարձրագույն կրթության և գիտության մասին ՀՀ օրենքի նախագիծ, այսուհետև՝ (ԲԿԳ ՕՆ) հոդված 1, 1-ին մաս	1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության համակարգի իրավական, կազմակերպական և ֆինանսական հարցերի հետ կապված հարաբերությունները: գործունեության իրավահարաբերությունները, ոլորտի կառավարման և ֆինանսատնտեսական հարաբերությունները: 2. Լրացնել նոր 2-րդ մաս՝ հետևալ բովանդակությամբ. 2. Սույն օրենքը սահմանում է բարձրագույն կրթության համակարգի նպատակներն ու խնդիրները, ոլորտի պետական քաղաքականության սկզբունքներն ու սոցիալական երաշխիքները, անձի նախասիրություններին, հնարավորություններին, գիտության ու աշխատաշուկայի կարիքներին և զարգացման միտումներին համապատասխան բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի իրացման, բարձրագույն կրթական ծրագրերի և դրանք իրականացնող կազմակերպությունների գործունեության հիմքերը, արդյունքների ճանաչման և համագործակցության մեխանիզմները: 3. Լրացնել նոր մաս՝ հետևալ բովանդակությամբ. Արվեստի, սպորտի և բժշկության ոլորտների որակավորումների համար կարող են սույն օրենքով կամ տվյալ ոլորտը կարգավորող այլ օրենքներով սահմանվել կարգավորման այլ հիմքեր և մեխանիզմներ:	+ + +	+ + +

	ԱԺ պատգամագոր Մխիթար Հայրապետյան ԱԺ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ հոդված 3, 1-ին մաս.	1. Հասկացությունների 3-6-րդ կետերում ամրագրել օտարերկրյա բուհերի կամ այլ պետությունների հավասարա ընդգրկված լինելու մոտեցումը և շարադրել հետևյալ կերպ. 3) բարձրագույն ուսումնական հաստատություն (այսուհետ՝ բուհ)՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որը օրենքով սահմանված հիմքերով իրականացնում է բարձրագույն կրթության համապատասխան մակարդակի կրթական ծրագիր, կազմակերպում մեթոդական, գիտահետազոտական, գիտատեխնիկական կամ նորարարական գործունեություն, 4) հանրային (պետական) բուհ՝ պետության կողմից միանձնյա կամ միջպետական պայմանագրի հիմքով համատեղ հիմնադրված ոչ առևտրային կազմակերպություն. 5) պետության մասնակցությամբ բուհ՝ պետության հետ համատեղ ոչ պետական կազմակերպության կամ ֆիզիկական անձնաց, (այդ թվում՝ օտարերկյա), հիմնադրված ոչ առևտրային կազմակերպություն, 6) մասնավոր բուհ՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից (այդ թվում՝ օտարերկրյա), հիմնադրված կազմակերպություն 2. Նույն տրամաբանությամբ՝ 7-10-րդ կետերում սահմանել գիտական կազմակերպություն, հանրային, պետության մասնակցությամբ և մասնավոր գիտական կազմակերպություն՝ բացառելով ֆիզիկական անձի կողմից դրանց ստեղծումը: 3. 13-16-րդ կետերում՝ «բարձրագույն կրթության որակավորում», «բակալավրի», «մագիտրոսի» և «գիտության դոկտորի» որակավորումներում լրացնել՝ «անձին շնորհվող» բառերը: 4. 17-րդ կետում՝ «ինտեգրված ծրագիր» հասկացությունը շարադրել հետ"յալ կերպ. բարձրագույն կրթության առաջին և երկրորդ մակարդակների անընդհատ հաջորդական համակցված ծրագիր, որի ավարտին անձին շնորհվում է երկրորդ մակարդակի որակավորում, 5. 21-րդ կետում՝ «էլեկտրոնային ուսուցում» տերմինը փոխարինել «հեռավար ուսուցում»-ով, այն դիտարկել որպես կրթության կազմակերպման մեթոդաբություն և շարադրել հետևյալ կերպ. «հեռավար ուսուցում՝ հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման ձև ու դասընթացի իրականացման մեթոդ, որի ընթացքում՝ անմիջական և ոչ անմիջական հաղորդակցումը դասախոսի, ղեկավարի (այլ պատասխանատուի) և ուսումնառող անձի (ուսանող,	+ + + + + + - -	+ + + + + + + +

			ունկնդիր, մասնակից) միջև իրականացվում է տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների միջոցներով.», 6. 27-րդ կետում՝ կրեդիտներ հասկացությունում լրացնել՝ «այդ թվում՝ գիտական հետազոտությունների, նվաճումների և մասնագիտական աշխատանքային հմտությունների» բառերը: Նման մոտեցման ամրագրումը կարող է խթանել և առավել ակտիվացնել գործատուների և գիտական կազմակերպությունների հետ համագործակցությունը, գիտահետազոտական ու աշխատանքային բաղադրիչի դերի բարձրացումը, 7. 29-րդ կետում «նվազագույն լրակազմ» բառերը փոխարինել լրացնել «ձեռք բերված ուսումնառության արդյունքները» բառերը, 8. 30-րդ կետում «արդյունքներ» բառից առաջ ավելացնել «դրական», 9. 32-րդ կետում «որակավորման ճանաչում» հասկացությունը շարադրել հետևյալ կերպ՝ «լիազորված մարմնի կողմից շնորհված օտարերկրյա որակավորման համադրելիության պաշտոնական հավաստում՝ որակավորումը կրողի մուտքը բարձրագույն կրթության հաջորդ աստիճան, համապատասխան մակարդակի այլ ծրագիր կամ աշխատանքային գործունեություն արտոնելու համար», 10. 34-րդ կետում՝ բուհի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում հասկացությունը առանձնացնել ու սահմանել հետևյալ կերպ. 34) բուհի ինստիտուցիոնալ (այսուհետ՝ ինստիտուցիոնալ) հավատարմագրում՝ որակի արտաքին գնահատման պարբերաբար իրականացվող պարտադիր գործընթաց, որի արդյունքում հավաստվում է բուհի տեսակին ներկայացվող օրենսդրությամբ սահմանված պահանջներին և դրանցում իրականացվող կրթական ծրագրի (կրթական ծրագրերի խմբի) համապատասխանությունը հավատարմագրման սահմանված չափանիշներին, 35) ծրագրային հավատարմագրում՝ որակի արտաքին գնահատման գործընթաց, որի արդյունքում հավաստվում է բուհի կողմից կրթական ծրագրի իրականացման համապատասխանությունը ծրագրային հավատարմագրման չափանիշներին, 11. Կետերի համարակալումը փոխել ու նոր 36-րդ ու 37-րդ	- + + - -	+ + + + +

			կետերը շարադրել հետևյալ կերպ. 36) ուսումնառության կրթաթոշակ՝ ուսանողին տրամադրվող կրթական ծառայությունների և (կամ) ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում կամ ուսանողին հատկացվող ֆինանսական աջակցություն, որը հատկացվում է ակադեմիական առավելությունների, հասարակական ակտիվության, գիտահետազոտական, գիտատեխնիկական և աշխատանքային կրեդիտների (չափանիշների) համար, 37) ուսումնառության նպաստ՝ ուսանողին տրամադրվող կրթական ծառայությունների և (կամ) ուսման վարձի սոցիալական փոխհատուցում՝ պետական բյուջեի միջոցների, ուսումնական հաստատության, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հատկացումների հաշվին.	- -	+ +
			12. 38-րդ և 39-րդ կետերում՝ «գիտահետազոտական» բառից հետո լրացնել «գիտատեխնիկական» բառը, 13. 40-րդ կետում «պրակտիկա» բառը փոխարինել «գործնական աշխատանքային ուսուցում» բառերով, իսկ «վերապատրաստում» բառը՝ «կատարելագործման» բառով,	+	+
			13. 41-րդ կետում՝ բուհական ինքնավարություն հասկացությունը շարադրել հետևյալ կերպ. «բուհի ակադեմիական և կազմակերպչական գործառույթները, այդ թվում՝ մարդկային ու ֆինանսատնտեսական ռեսուրսները կառավարելու, դրանց հետ կապված կարգավորումները ինքնուրույն սահմանելու, որոշումներ կայացնելու և իրականացնելու իրավասություններ»,	+	+
			14. 43-46-րդ կետերում գործունեություն բառից առաջ լրացնել «աշխատանք/ » բառը,	-	+
			15. 48-րդ կետից հանել՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բուհերում և դրանց մասնաճյուղերում» բառերը,	+	+
			16. 49-րդ կետում «այդ թվում» բառերը փոխարինել «ինչպես նաև» բառերով, իսկ նախադասության վերջում լրացնել «միջպետական համագործակցության ծրագրերում ընդգրկված, ուսումնառող կամ աշխատող» բառերը,	+	+
			17. սահմանել սոցիալական գործընկեր հասկացությունը, հետևյալ բովանդակությամբ՝ 50) սոցիալական գործընկեր՝ բուհի, գիտական կազմակերպությունների և գործատուների միջև	+	+

			համընդհանուր համաձայնեցված նպատակների իրականացմանը միտված գիտական, աշխատանքային, գործընկերային ու սոցիալական համագործակցության դրսևորման ձև:		
	Աժ պատգամագոր Մխիթար Հայրապետյան Աժ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 4, մաս 1 հոդված 4, մաս 2 հոդված 4, մաս 3	1-ին կետում ավելանել բուհերի բառը, 3-րդ կետում՝ բուհերի կառավարման և լրացնել 7-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ. 7) բարձրագույն կրթության շրջանավարտների և ձերք բերված արդյունքների մրցունակությունը: 1-ին մասում լրացնել և շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ 1) հայագիտության զարգացումը ՝ ի նպաստ հայապահպանության և միջազգային երկխոսության, 4-րդ կետում լրացնել «կազմակերպությունների միջև սոցիալական գործընկերության խթանումը,» բառերը, 5-րդ կետում «առաջադեմ» բառը փոխարինել «լավագույն» բառով, 5-րդ կետում «միջավայրի և համընդհանուր» բառերը փոխարինել «հնարավորությունների ու հասանելիության ապահովում» բառերով,	- - - + + +	+ + + + + +

			6-րդ կետում «մատչելի պայմանների» բառերը փոխարինել «կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի ապահովում» բառերով, 9-րդ կետում «պահանջմունքները» բառը փոխարինել «նախասիրությունները, զարգացման առանձնահատկություն-ները», 10-րդ կետում «ապահովում է» բառից հետո լրացնել «դրանց իրացման, ճանաչման և արդյունաբերության մեջ ներդրման նպաստում», 11-րդ կետում «ապահովում է» բառից հետո լրացնել «նախաձեռնողականության խթանում՝ ուսումնառության կրթաթոշակների և նպաստների տրամադրման միջոցով,» 18-րդ կետում «ձեռնարկատիրական գործունեությանը» բառերից հետո ավելացնել «և ֆոնդհայթայթման միջոցառումներին աջակցում» բառերը, 20-րդ կետում «ինչպես նաև» բառերից հետո ավելացնել հետևյալ բովանդակության. «...ուսանողական նախաձեռնությունները խթանելու, սոցիալական աջակցություն ցուցաբերելու, բուհի զարգացման ռազմավարական ծրագրերը ապահովելու նպատակով պետական աջակցության ցուցաբերում՝ դրամաշնորհների, կրթաթոշակների, նպաստների, վարկավորման, լրացուցիչ ֆինանսավորման միջոցով։»	+ + + + - +	+ + + + + +
	Աժ պատգամագոր Մխիթար Հայրապետյան Աժ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 5	2-րդ մասը և 1-ին կետը շարադրել հետևայլ կերպ. 2. Բուհը սույն օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված լիազորություններին համապատասխան կարող է իրականացնել է հետևյալ հիմնական գործառույթները՝ 1) կազմակերպում և իրականացնում է ուսանողների, կլինիկական ռեզիդենտների, ներառյալ՝ օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը՝ ըստ բուհի կրթական ծրագրերի և որակավորումների, 5-րդ կետում «առաջադիմության» բառը փոխարինել «կրեդիտների կուտակման վերջնարդյունքների ձեռքբերման և նախաձեռնողականության» բառերով. 7-րդ կետում՝ «վարչական կազմի» բառերից հետո շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ մասնագիտական կատարելա-գործման դասընթացներ և զարգացմանն ծրագրեր,	+ + +	+ + +

	ԱԺ պատգամագոր Մխիթար Հայրապետյան ԱԺ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 6, մաս 1 ԲԿԳ ՕՆ, հոդված 6, մաս 3 և 6 ԲԿԳ ՕՆ, հոդված 6, Մաս 4	Շարադրել հետևյալ բովանդակությամբ. 1. Բուհը իր գործունեությունը իրականացնում է ինքնակառավարման իրավունքի լիարժեք իրացման միջոցով՝ բուհական ինքնավարության, ակադեմիական և հետազոտությունների ազատության, կոլեգիալության սկզբունքներով՝ պահպանելով հաշվետվողականության պահանջները: Խմբավորել և շարադրել հետևյալ բովանդակությամբ. 3. Բուհի կառուցվածքային միավորների կառավարման և ֆինանսական իրավահարաբերությունները կարգավորվում են բուհի կանոնադրությամբ՝ ապահովելով դրանց կառավարման և ֆինանսական ինքնուրույնության վերաբերյալ դրույթներ: 6-րդ մասը հանել: 4-րդ մասը տեղափոխել հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկ: Նոր 8-րդ մասը շարադրել հետևալ բովանդակությամբ՝ 8. Բուհը մշակում և հրապարակում է (թարմացնում է) իր գործունեությանն առնչվող և իր կողմից սահմանված նորմատիվ իրավական ակտերը և ներքին ակտերը, այդ թվում՝ զարգացման ռազմավարական և տարեկան ծրագրերը, ակադեմիական բարեվարքության կանոնակարգը, կրթական ծրագրերը, ուսումնամեթոդական և ներքին կարգապահական կանոնները, ուանողների հեռացման և պատասխանատվության ենթարկելու դեպքերը, վերականգման, տեղափոխման կարգը, սահմանված ծառայությունների ցանկը, դրանց կազմակերպման ընթացակարգերը, գնացուցակը և իրականացման պայմանները և այլն:	+ + + +/-	+ + + +
	ԱԺ պատգամագոր Մխիթար Հայրապետյան ԱԺ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 7, Մաս 4 հոդված 7, մաս 5-7	«ապրիլի» բառը փոխարինել «մայիսի» բառով. 4-րդ մասում՝ «բեռնվածությամբ» բառից եհտո ավելացնել «բացառությամբ ռազմական բարձրագույն կրթության ծրագրերի, որոնց առաջին և երկրորդ մակարդակների կրթական ծրագրերն իրականացվում են միայն լրիվ բեռնվածությամբ:» էլեկտրոնային ուսուցման կարգավորման վերաբերյալ 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը հանել, թողնելով բուհի ուսումնական գործընթացի կազմակերպմանը:	+	+
	ԱԺ պատգամագոր Մխիթար Հայրապետյան ԱԺ պատգամավոր Հովհաննես	ԲԿԳ ՕՆ, հոդված 9, Մաս 11-ից 18-րդ մասեր	Կրթական ծրագրերի, մակարդակների բեռնվածության և կրեդիտների քանակ, դրանց առանձնահատկությունների վերաբերյալ դրույթները խմբավորել և հստակեցնել: Խմբագրվել և խմբավորվել է՝ պահպանելով բովանդակությունը	-	+

	Հովհաննիսյան				
	Աժ պատգամագոր Մխիթար Հայրապետյան Աժ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 10 մաս 1 հոդված 10, Մաս 6 հոդված 10, Մաս 4	Հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը Տեղափոխել հավատարմագրման համակարգ «գիտական կազմակերպության» բառերից հետո ավելացնել «կամ սոցիալական գործընկերության կողմ հանդիսացող կազմակերպության, այդ թվում՝ պետական մարմնի հետ համատեղ:»	+ - -	+ + +
	Աժ պատգամագոր Մխիթար Հայրապետյան Աժ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	Նոր հոդված 11, Համապատաս-խանաբար 1 նիշով փոխել հետընթաց հոդվածների համարակալումը	Սահմանել Հոդված 11. Կլինիկական ռեզիդենտուրայի (կլինիկական օրինատուրա) Հաշվի առնելով կլինկիկական ռեզիդենտուրայի և ռազմական բժշկության կարգավորման առանձնահատկությունը, առանձին հոդվածում ամբողջացնել այդ հարաբերությունների վերաբերյալ դրույթները:	+	Խմբագրվել ու խմբավորվել է +
	Աժ պատգամագոր Մխիթար Հայրապետյան Աժ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 10 մաս 1	Խմբագրել և ամրագրել մասնակից կողմ բառերը, իսկ պարտավորություններում սահմանել՝ շրջանավարտների փոխճանաչման շրջանակը: Համատեղ կրթական ծրագրի կազմակերպման կարգը պետք է համաձայնեցվի ներկայացնում տվյալ գործընկեր բուհի կամ կազմակերպության հավանությանը:	-	+
	Աժ պատգամագոր Մխիթար Հայրապետյան Աժ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 14 մաս 1	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. 1. Անհատներին շնորհված որակավորումները ճանաչվում և գնահատվում են այդ բնագավառում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված ճանաչման վերաբերյալ կոնվենցիաների, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև կնքված միջազգային պայմանագրերի և այլ իրավական ակտերի համաձայն՝ իր գործառույթներում անկախ մասնագիտացված կառույցի կողմից տրված տեղեկատվության (խորհրդատվության) հիման վրա:	-	+
	Աժ պատգամագոր Մխիթար Հայրապետյան Աժ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 15 մաս 3-, 4, 5	Խմբագրել, 4-րդ մասը համարել 3-րդ և շարադրել հետևյալ խմբագրությամբ. 3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիցենզավորումն իրականացնում է համապատասխան լիազոր մարմինը՝ լիցենզավորման ստորաբաժանման եզրակացության և լիցենզավորման հանձնաժողովի որոշման հիման վրա՝ լիցենզավորման ոլորտը կարգավորող օրենքի, սույն օրենքի,	-	+

			բարձրագույն կրթության մակարդակների կրթական ծրագրերի լիցենզավորելու կարգի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան: 3-րդ մասը համարել 4-րդ, 1-ին կետում՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված համապատասխան իրավունքներ» բառերը փոխարինել «սեփականության կամ օգտագործման իրավունք» բառերով. 2-րդ կետում՝ «ուսումնաարտադրական պրակտիկայի» բառերը փոխարինել « մասնագիտական գործնական (աշխատանքային) ուսուցման» բառերով, 16-րդ կետի սկզբունքը տեղափոխել 4-րդ և 5-րդ կետեր և շարադրել հետևյալ խմբագրությամբ. 4) բուհի հինգ տարվա ռազմավարական ծրագրի առկայությունը, իսկ մասնավոր և պետության մասնակցությամբ բուհերի դեպքում՝ նաև բիզնես պլանի, դրա համար անհրաժեշտ ֆինանսավորման հիմնավոր աղբյուրների վերաբերյալ: 5) ուսանողներին ֆինանսական աջակցություն տրամադրելու պարտավորությունը՝ պետության մասնակցությամբ բուհերի և մասնավոր բուհերի դեպքում:	+	+
		ԲԿԳ ՕՆ, հոդված 15 մաս 6	Խմբագրել և շարադրել հետ"յալ կերպ. Կրթական ծրագիրը գիտական կազմակերպության կամ սոցիալական գործընկերության կողմ հանդիսացող կազմակերպության հետ համատեղ իրականացնելու դեպքում տվյալ կազմակերպությունը բուհին է տրամադրում տեղեկություններ կրթական և գիտական նպատակով տրամադրվող իր ռեսուրսների վերաբերյալ (գիտահետազոտական, մասնագիտական, նյութատեխնիկական), որոնք համալրում են լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների հիմքերը:	+	+
		հոդված 15, մաս 7, 4 և 5 կետ	7. Խմբագրել և շարադրել հետևյալ կերպ. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի հիման վրա բուհին տրված համապատասխան լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել և լիցենզիան ուժը կորցրած ճանաչվել կրթության պետական կառավարման լիազոր մարմնի որոշումով, եթե՝ ... 4) Բուհը կամ օրենքով սահմանված հիմքերով կրթական ծրագիր իրականացնող իրավաբանական անձը լուծարվել կամ գործունեությունը դադարեցրել է, ինչպես նաև փոփոխվել է բուհի հետ համագործակցության կողմ	-	+
				+	+

			հանդիսացող կազմակերպության այնպիսի պայմաններ, որոնք էականորեն ազդում կամ խաթարում է կրթական ծրագրի իրականացումը և բուհը փոխարինող կամ այլընտրանք չի առաջարկում, 5) սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ և 10-րդ մասերով սահմանված ժամկետում բուհը չի դիմել ինստիտուցիոնալ հավատարմագրման կամ ծրագրային հավատարմագրումը երկու անգամ անընդմեջ մերժվել է:		
	Աժ պատգամագոր Մխիթար Հայրապետյան Աժ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 17 մաս 1 3-րդ և 4-րդ մաս	Շարադրել հետևյալ խմբագրության՝ Բուհի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումն իրականացվում է որակի գնահատման կամ հավաստման ազգային կառույցները կամ միջազգային ցանցերը՝ սույն հոդվածով և 16-րդ հոդվածով սահմանված դրույթներին, Կառավարության սահմանած կարգին և միջպետական պայմանագրերի հիման վրա: «չորս» բառը փոխարինել «յոթ», իսկ 4-րդ մասում «մեկ» բառը փոխարինել «երկու» բառով. Լրացնել հետ"յալ բովանդակությամբ նոր մաս. Հավատարմագրումն իրականացվում է ըստ առանձին բուհերի, ներառելով տվյալ բուհի կրթական ծրագրերի առնվազն 10%-ը կամ տվյալ կրթական ոլորտում ներառված կրթական ծրագրերի խմբի:	- - +/-	+ + +
	Աժ պատգամագոր Մխիթար Հայրապետյան Աժ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 18 մաս 2	Լրացնել նոր մաս, հետ"յալ բովանդակությամբ. 2. Բուհերի ընդունելության հիմնական սկզբունքները, նախապայմանները, մրցույթի չափանիշները սահմանում է Կառավարությունի, իսկ ներքին ընթացակարգեր, այդ թվում՝ բողոքարկման, սահմանում է բուհը:	-	+
	Աժ պատգամագոր Մխիթար Հայրապետյան Աժ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 19	Հանել «բացառությամբ արհեստակցական, մասնագիտական, մշակութային, մարզական, ուսանողական և շրջանավարտների կազմակերպությունների ու միությունների» բառերը:	+	+
	Աժ պատգամագոր Մխիթար Հայրապետյան Աժ պատգամավոր	ԲԿԳ ՕՆ, հոդված20 մաս 2	Լրացնել նոր կետ, հետ"յալ բովանդակությամբ. 2) որոշում է հանրային, պետական մասնակցությամբ և մասնավոր բուհերի հիմնադրման և գործունեություն առանձնահատկությունները,	+/-	+

	Հովհաննես Հովհաննիսյան	մաս 5,	«ընդունելության կարգը» բառերը փոխարինել «ընդունելության սկզբունքները, չափանիշները և շրջանակը»,	+	+
	ԱԺ պատգամագոր Մխիթար Հայրապետյան ԱԺ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 20, մաս 9 , Նոր՝ 12-18 կետեր	Լրացնել հետևյալ բովանդակությամբ կետեր, 9) հիմնադրում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա (այսուհետև՝ ակադեմիա) 12) հաստատում է բուհեր և գիտական կազմակերպությունների տարատեսակները, 13) հաստատում է կլինիկական ռեզիդենտուրայի ընդունելությանը և ամփոփիչ ատեստավորմանը ներկայացվող պահանջները, կազմակերպման չափանիշները և առանձնահատկությունները, ինչպես նաև մասնագիտական ուղղություններին ներկայաց-վող պահանջները՝ վերջնարդյունքները, 14) կլինիկական ռեզիդենտուրայի մասնագիտական ուղղությունների (ըստ՝ մասնագիտությունների, նեղ մասնագիտությունների) ցանկը և դրանց տևողությունները, 15) հաստատում է բարձրագույն կրթության առաջինից երրորդ մակարդակներով շնորհվող որակավորումները, ինչպես նաև կլինիկական ռեզիդենտի որակավորումը, հավաստող դիպլոմների (այդ թվում՝ համատեղ դիպլոմի) և հավելվածի ձևերը, 16) սահմանում է ինստիտուցիոնալ հավատարմագրի գործողության ժամկետը, 17) հաստատում է ըստ ակադեմիական բնագավառների և կրթական ոլորտների (ներառյալ կլինիկական ռեզիդենտուրայի) նախատեսվող պետական կրթաթոշակների տոկոսային համամասնությունը՝ հաջորդ երեք ուսումնական տարիների համար, 18) իրականացնում է սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:	+	+
	ԱԺ պատգամագոր Մխիթար Հայրապետյան ԱԺ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 22, մաս 1, կետ 3 15 կետ 19-րդ կետ	Խմբագրել հետևյալ կերպ. 3) մշակում և լիազոր մարմնին է ներայացնում գիտության ոլորտի արդյունավետ կառավարման, այդ թվում՝ կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ հիմնավոր առաջարկներ, կազմակերպում դրանց իրականացումը, Ռազմատեխնիկայի բառից հետո լրացնել «և իր լիազորության շրջանակում այլ ծրագրերի» բառերը, 19-րդ կետը խմբագրել որպես գիտկոմի գործառույթները իրականացնելու միջոց, շարադրել որպես հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս.	+ +	+ +

			2. Սույն հոդվածով 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 11-րդ և 15-րդ կետերով սահմանված գործառույթները ապահովելու նպատակով բարձրագույն կրթության և գիտության համակարգում գիտության կոմիտեն ստեղծում է մասնագիտական փորձագիտական խորհուրդներ, մրցութային հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր, ինչպես նաև կարող է ձևավորել մասնագիտական և խորհրդակցական, հաստատել դրանց կազմը: Որպես 19-րդ կետ լրացնել հետ"յալ բովանդակությամբ նոր մաս. 19) մշակում և համապատասխան լիազոր մարմին է ներկայացնում բուհի և գիտական կազմակերպությունների ակադեմիական պաշտոնների, այդ թվում՝ պրոֆեսորի և գիտական աշխատողներին ներկայացվող հիմնական չափանիշները,	+ +	+ +
	Աժ պատգամագոր Մխիթար Հայրապետյան Աժ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 25, մաս 12	Հանել	+	+
	Կառավարություն Աժ պատգամագոր Մխիթար Հայրապետյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 27	Հինմնավորապես խմբագրել մոտեցումը և շարադրել հետևյալ բովանդակությամբ. 1. Հանրային բուհի կառավարման խորհուրդը մշտապես գործող մարմին է, որի յուրաքանչյուր անդամ գործում է 5 տարի ժամկետով, եթե սույն օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված հիմքերով տվյալ անդամի լիազորությունները ավելի վաղ չի դադարեցվել: Խորհրդի անվանական կազմը հաստատում է համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը՝ կառավարման խորհրդի ձևավորման պահանջների բավարար հիմքերի առկայության դեպքում: 2. Հանրային բուհի կառավարման խորհուրդը բաղկացած է 9 -անդամից: 3. Հանրային բուհի կառավարման խորհուրդը ձևավորվում է հետևյալ համամասնությամբ՝ 1) չորսը՝ բուհի ակադեմիական խորհրդի առաջադրմամբ բուհի հետ համագործակցող կազմակերպությունների, գիտամանկավարժական անձնակազմի և ուսանողության ներկայացուցիչներից, որոնց ներկայացվող պահանջները և առաջադրման կարգը սահմանվում է սույն հոդվածի 4-րդ մասով և բուհի կանոնադրությամբ,	+	+

			2) հինգը՝ համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը՝ գործարարների, կրթության, գիտության, մշակույթի կամ գործատուների (բուհի մասնագիտական ոլորտը սպասարկող ոլորտների) ներկայացուցիչներից: 4. Հանրային բուհը կառավարման խորհրդի իր անդամի թեկնածուներին ներկայացվող պահանջները և առաջադրման, փոխարինման և լիազորությունները դադարեցնելու ընթացակարգը սահմանում է բուհի ակադեմիական խորհուրդը: 5. Հանրային բուհի խորհրդի գործող անդամի լիազորությունների ժամկետի ավարտից առնվազն մեկ ամիս առաջ, իսկ խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքում՝ դադարման օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում, խորհրդի նախագահը այդ մասին տեղյակ է պահում բուհի ակադեմիական խորհրդին և համապատասխան լիազոր մարմնի ղեկավարին: 6. Կառավարման խորհրդի անդամի թափուր տեղի համալրումը կատարվում է առաջարկությունը ստանալու օրվան հաջորդող 5 օրյա ժամկետում:		
	Աժ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 29	5-րդ մասը հանել	+	+
	Աժ պատգամագոր Մխիթար Հայրապետյան Աժ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ, հոդված 30, 1-ին մաս

		30, 3-րդ մաս	3. Հանրային բուհի զարգացման ռազմավարական ուղղություններ սահմանելու, ոլորտային կրթական ծրագրեր ներդնելու, համագործակցության շրջանակը ընդլայնելու, համագործակցության պայմանագրեր կնքելու, բուհի ֆինանսատնտեսական գործունեությունը և ծախսային ուղղությունները սահմանելու և այլ կառավարչական որոշումները հիմնավորված կայացնելու նպատակով, կառավարման խորհուրդը կարող է ստեղծել ոլորտային հանձնաժողովներ, որոնց ձևավորման և գործունեության կարգը սահմանում է կառավարման խորհուրդը: Ոլորտային հանձնաժողովների որոշումները կրում են խորհրդատվական բնույթ:	-	+
	ՀՀ կառավարություն ԱԺ պատգամավոր Մխիթար Հայրապետյան	ԲԿԳ ՕՆ 32 հոդված, 2-րդ մաս, 1-ին " 2-րդ կետ Մաս 4-րդ, Նոր 5-րդ " 6-րդ մաս	Խմբագրել հետևյալ կերպ. 2. Հանրային բուհի ռեկտորի (այդ թվում՝ մասնաճյուղի տնօրենի) պաշտոնում կարող է ընտրվել և նշանակվել այն անձը, որն ունի գիտական աստիճան և՝ 1) բուհում դասավանդման և վարչական աշխատանքի առնվազն ~~5~~ 10 տարվա աշխատանքային փորձ կամ, 2) գիտական և ղեկավար աշխատանքի առնվազն ~~5~~ 7 տարվա աշխատանքային փորձ կամ, Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս. Սույն օրենքի 29-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետի հիմքերով՝ խորհուրդը իր հիմնավոր որոշումով կարող է անվստահություն հայտնել ռեկտորին և առաջարկել համապատասխան լիազոր մարմնի ղեկավարին՝ վաղաժամկետ դադարեցնել տնօրենի հետ կնքված պայմանագրի գործողությունը: 4-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. 5. Հանրային բուհի ռեկտորն ընտրվում է կառավարման խորհրդի կողմից՝ ընտրանքային կարգով: Ընտրանքային փուլին մասնակցած և փակ գաղտնի քվերակության արդյունքում մրցույթը հաղթահարած մինչև երեք թեկնածու կարող են խորհրդի որոշումով առաջարկվել համապատասխան լիազոր մարմնի ղեկավարի հաստատմանը: Նշանակված ռեկտորի հետ լիազոր մարմնի ղեկավարը 5 տարի ժամկետով կնքում է սահմանված նմուշի պայմանագիր: 6. Հանրային բուհի մասնաճյուղի տնօրենին նշանակում է տվյալ բուհի ռեկտորը՝ 5 տարի ժամկետով: 8-րդ մասի «երեք» բառը փոխարինել «վեց», իսկ «երկու» բառը՝ «երեք», 9-րդ մասում՝ «մեկամսյա ժամկետում» բառերը փոխարինել «տասը աշխատանքային օրվա ընթացքում»,	+ + +	+ + +

		Նոր 8-րդ և 9-րդ Մաս Մաս 12, Մաս 13,	12. ~~11.~~ Ռեկտոր (մասնաճյուղի տնօրեն) չի կարող ընտրվել կամ նշանակվել այն անձը, որը՝ 1) հանդիսանում է որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ կամ զբաղեցնում է քաղաքական պաշտոն, 12-րդ մասը հանել, խմբագրել 29-րդ հոդվածի 8-րդ մասում, 13-րդ մասում՝ «լիազոր մարմնի ղեկավարը» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «մինչև մեկ տարի ժամկետով նշանակում է ռեկտորի պաշտոնակատար՝ որը համապատասխանում է սույն օրենքով ռեկտորին ներկայացվող պահանջներին:	+ +	+ +
	ԱԺ պատգամագոր Մխիթար Հայրապետյան ԱԺ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ 37 հոդված, 3-րդ , 4-րդ մաս,	Լրացնել հետ"յալ բովանդակությամբ նոր 3-րդ և 4-րդ մասեր. 3. Բուհ և գիտական կազմակերպության առանձնահատկություններից ելնելով տվյալ կազմակերպությունը կարող է սահմանել այլ պաշտոններ: 4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ակադեմիական կազմի և գիտական աշխատողների պաշտոններին ներկայացվող հիմնական չափանիշները սահմանում է կառավարությունը՝ հաշվի անելով տվյալ բուհի, կրթության մակարդակի և ոլորտի կրթական ծրագրերի առանձնահատկությունները: 6. Սույն օրենքի 5-րդ մասով սահմանված վարչական պաշտոններում չեն կարող ընտվել (նշանակվել) այն անձինք, որոնք ընդգրկված են կուսակցական և քաղաքական ղեկավար մարմիններում կամ պետական պաշտոններում:	+ - +	+ + +
	ԱԺ պատգամագոր Մխիթար Հայրապետյան ԱԺ պատգամավոր Հովհաննես Հովհաննիսյան	ԲԿԳ ՕՆ 40 հոդված, 2-րդ մաս, 8-րդ մաս	Շարադրել հետևյալ բովանդակությամբ. 2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը լիցենզավորված բուհերը մինչև 2022 թվականի հունիսի 30-ը ներառյալ համապատասխան լիազոր մարմին են ներկայացնում սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերի ամբողջական փաթեթը՝ համաձայն լիազոր մարմնի սահմանած ձևաչափի: Սահմանված ժամկետում փաստաթղթերը չհամալրելու դեպքում մինչև հուլիսի 15-ը, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով տվյալ բուհի գործունեությունը դադարեցվում է: 8. Սույն օրենքի 26-31-րդ հոդվածների, 36-րդ հոդվածի 9-ից 15-րդ մասերի դրույթները, կարող են չկիրառվել պետության մասնակցությամբ բուհերի վրա: Այդ բուհերի նկատմամբ	+ +	+ +

		13-րդ մաս	կիրառվում են տվյալ բուհի կանոնադրությամբ սահմանված նորմերը: Նշված բուհերում օտար լեզուներով ուսուցման կազմակերպումն դասընթացը կազմակերպվում է բուհին տված լիցենզիայի հիման վրա: Հանել	+	+